# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 ապրիլի 2026թ. թիվ 218-Ա

## Մ.ԱՄԻՐՅԱՆԻՆ «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգը հաստատելու մասին» թիվ 181-Ն որոշման հավելվածի 6-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2026 թվականի մարտի 25-ի թիվ 197-Ա որոշումը և հաշվի առնելով Մ.Ամիրյանի համաձայնագիրը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. «ՀՀ Լոռու մարզի Փամբակի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող նշանակել «ՀՀ Լոռու մարզի Փամբակի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվար Մարինե Ամիրյանին՝ մինչև օրենքով սահմանված կարգով մրցույթի արդյունքում նոր տնօրենի ընտրությունը:

2. «ՀՀ Լոռու մարզի Փամբակի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝ «ՀՀ Լոռու մարզի Փամբակի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ սահմանված տնօրենի պարտականությունների իրականացման համար Մարինե Ամիրյանին տալ լրավճար «ՀՀ Լոռու մարզի Փամբակի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի աշխատավարձի 30%-ի չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի ապրիլի 2-ից:

X

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. ապրիլի 2
ք.Վանաձոր